ՀՀ ԿԳՆ Երևանի

<<Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի

2016-2021թ.թ. զարգացման ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային կրթության զարգացման գերազանցության ծրագիրը հանրակրթության մակարդակի համահավասարեցումն է միջազգային չափանիշներին:

Սա հանրակրթության դերի, նշանակության մակարդակի բարձրացման, միջազգային չափանիշների համահավասարեցման գործընթաց է, և պահանջվում են.

ա/ կրթական բարեփոխումներ

բ/ պետական և հասարակական հոգածություն

գ/ կրթության կարեվորագույն գնահատում

դ/ ազգային կրթության, մտածելակերպի մոտեցումը միջազգային, համաշխարային կրթական չափանիշներին:

Սա երկարատև, բայց տեսանելի ծրագիր է:

Սա իրականություն կդառնա միայն պատասխանատվության գերագույն լարման, աշխատասիրության, ազգային մտածողության՝ պետությունից մինչև հասարակություն, ուսուցչից մինչև գիտնական և սովորողից մինչև ծնող:

Սա գիտելիքների ձեռքբերման, արժեհամակարգի ձևավորման գերազանցության ազգային ծրագիր է լինելու համաշխարային կրթական իրականության մեջ:

Աշխատենք և հուսանք:

Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 ավագ դպրոցը հիմնադրվել է 1986թ-ին 1500 աշակերտի հզորությամբ, ընդհանուր մակերեսը 7836մ.քառ, տիպային ,եռհարկանի և երկհարկանի մասնաշենքերով : Ջեռուցումը կազմակերպվում է անհատական ջեռուցման համակարգով, ապահոված է մշտական ջրով, շենքը կարիք ունի հիմնանորոգման:

ՀՀ կառավարության 11.06.2009թ. 664-Ն որոշումով դպրոցը վերակազմավորվել և դարձել է ավագ դպրոց: ՀՀ ԿԳՆ Երևանի <<Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող , իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հոսքային ուսուցմամբ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է : Դպրոցն աշխատում է մեկ հերթով:

Դպրոցում՝

Աշակերտ - 607

Մանկավարժներ -61

Սպասարկող անձնակազմ- 17

Դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը:

Դպրոցն իր աշխատանքները կատարում է ՀՀ սահմանադրության, <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի, <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքի ՀՀ կառավարության որոշումների և գերատեսչական իրավական ակտերի համաձայն:

Հանրակրթություն իրականացնելիս դպրոցը հենվում է պետության կողմից երաշխավորված հետևյալ սկզբունքների վրա. մարդասիրություն, կյանքի և առողջության պահպանություն, անհատի ազատ և համակողմանի զարգացում, քաղաքացիական գիտակցություն, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, հայրենասիրություն, հանդուրժողականություն, բնապահպանական աշխարհայացք, հանրակրթության մատչելիություն և հավասար հնարավորություններ, ժողովրդավարական կառավարման սկզբունքներ, սովորողների ստեղծագործական, վերլուծական և քննադատական մտքի խթանում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում և հանրակրթական ինտեգրում միջազգային կրթական համակարգին:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ավագ դպրոցում ստեղծել կրթադաստիարակչական այնպիսի բարենպաստ միջավայր , որը կապահովի սովորողների սոցիալականացումը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:

Հիմնական նպատակներն են.

ա/ ապահովել որակյալ կրթություն,

բ/ բարձր տեխնոլոգիաների ներդրում,

գ/ կրթության նորացված բովանդակության մշակում և ներդրում<

դ/ մասնագիտական կողմնորոշման ապահովում,

ե/տեղետվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում՝ մանկավարժների մասնագիտական կրթության առանձնահատկություններն ապահովելու և ուսումնական գործընթացն ակտիվացնելու համար,

զ/ մասնակցությունը տարբեր ծրագրերի:

Հայրենասիրության դաստիարակությունը լինելու է մեր գործունեության անկյունաքարը.

1. ազգային հոգևոր-մշակութային արժեքների վերարտադրման պետական խորհրդանիշերը՝ Հայաստանի Հանրապետության զինանշան, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության դրոշ, ՀՀ օրենքները:

2. ազգային ինքնության և անկախության բաղկացուցիչներ /հայոց լեզու,ընտանիք, Հայաստանյաց առաքելական եկեղեցի, ՀՀ անկախության հռչակագիր, ՀՀ Սահմանադրություն, ՀՀ նախագահ, ՀՀ ազգային ժողով, Հայոց բանակ, Գործադիր և դատական մարմիններ, մայրաքաղաք, Ազգային դրամ/:

Սովորողները պետք է քաջ գիտակցեն, որ ազգային պետական խորհրդանիշերի իմացության միջոցով նպաստում են հայության ինքնության ամրապնդմանը,սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում մասնակցելու հնարավորության ստեղծմանը:

Պետականության և նրա բաղկացուցիչների նկատմամբ դպրոցում պետք է արմատավորվի հարգանք և ակնածանք,ձևավորվի քաղաքացիական վարքի մշակույթ,հաստատվի հասարակական,պետական շահերի գերակայություն՝անձնական շահերի նկատմամբ:

3. Համայնքի հետ ակտիվ համագործակցություն, համայնքի սոցիալ - մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում:

4 << Դպրոց բոլորի համար>> -որտեղ կարող են սովորել և օժտված, և սովորական երեխաները և կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները:

5. Բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ կրթական միջավայրի ձևավորում:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

Դպրոցի թույլ կողմերը

Համաշխարհային զարգացման տվյալ փուլում կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը, զարգացնելով համակեցության , հանդուրժողականության, համագործակցության և այլ արժեքավոր որակներ: Անհրաժեշտություն է առաջանում բարեփոխել հանրակրթությունն այնպես, որ .

ա/հանրակրթության բովանդակությունը արդիականացվի և կատարելագործվի

բ/բարելավվի անձի ու քաղաքացու ձևավորումը՝ բարոյական դաստիարակությունը, բարձրացվի սովորողների մոտիվացիան

գ/ բարելավվի հանրակրթության կառավարումը

դ/ խրախուսվի և խթանվի ուսուցման կազմակերպման այլընտրանքային ձևերը,

ե/ բարձրացվի դպրոցի կառավարման գործում ծնողների մասնակցության ակտիվությունը

զ/ վերազինվի նյութատեխնիկական բազան

ը/ վերապատրաստումների միջոցով բարձրացվի ուսուցչի մասնագիտական հմտությունները

թ/ լրաչուցիչ կրթական ծրագրերի իրականացում/ խմբակների բացում/

ժ/ դպրոցի հիմնանորոգում

Այս գործընթացը ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար դպրոցի մանկավարժական կոլեկտիվից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք և միաժամանակ, գիտելիքների

վերազինում, նոր մեթոդներով վերազինում, ատեստավորում, տարակարգի շնորհում:

Դպրոցի ուժեղ կողմերից է

1. *բյուջեի ճիշտ պլանավորում,*
2. *ուսուցչական անձնակազմի պարտաճանաչ և խստապահանջ աշխատանքը*
3. *դպրոցի սանիտարահիգիենիկ բավարար մակարդակը*
4. *կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի հարգալից վերաբերմունքը մեկը մյուսի նկատմամբ:*
5. *ԲՈՒՀ ընդունվողների բարձր ցուցանիշը - 141*
6. *սովորողների մոտիվացիայի բարձրացումը*
7. *դասղեկի աշխատանքի մոտիվացիան*
8. *աշխատանքը սկսնակ ուսուցիչների հետ*
9. *ուսումնամեթոդական բազայի ստեղծումը, նորարարությանն ընդառաջ գնալը և կիրառումը:*
10. *առարկայական օլիմպիադայի կարգեր փուլերի հաջողությունները*

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Դպրոցի զարգացման հնգամյա պլանում /2016-2021թ.թ./ սահմանել գործողությունների այնպիսի պլան, որը հնարավորություն կտա դպրոցին ունենալ բակալավրի կրթություն տալու իրավունք:

2. Դպրոցում ներդնել նորարարական մոտեցումներ, որի արդյունքում կձևավորվի կրթական նոր միջավայր:

3. Վերոնորգման աշխատանքներ.

ա/ փոխել դպրոցի պատուհանները

բ/վերանորգել սպորտդահլիճները, հանդիսությունների դահլիճը, դասասենյակները, ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաները, գրադարանը:

գ/վերոնորոգել և ժամանակակից ոճով կահավորել միջանցքները,

դ/բարեկարգել դպրոցի սպորտ հրապարակը,

ե/ վերանորոգել 3-րդ հարկերի և սպորտ դահլիճների սանհանգույցները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բակային հատվածի, սպորտդահլիճների, հանդիսությունների դահլիճի վերանորգում
2. Մանկավարժական համակազմի վերապատրաստում և որակական բարելավում
3. Լաբորատոր գույքով դպրոցի վերազինում
4. Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման
   առումով իրականացվող խնդիրներ:
5. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում
6. Հայրենասիրական դաստիարակություն
7. Տեղեկատվության ապահովում
8. Ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության
   բարելավում
9. Ներքին գնահատման և ներդպրոցական վերահսկողության բարելավում
10. Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում
11. Ուսուցման ձևի և մեթոդիկայի անընդհատ կատարելագործում.կոլեկտիվ ուուցման ներդրում, ժամանակակից տեխնոլոգիաների լայն կիրառություն դասավանդման ընթացքում
12. Հոգաբարձուների խորհրդի ստեղծում –
13. Կառավարման, ծնողական և աշակերտական խորհուրդների դերի բարձրացում
14. Խրախուսման ֆոնդի ստեղծում
15. Դպրոցական գույքի ձեռք բերում
    - համակարգչային տեխնիկա
    - էլեկտրոնային գրատախտակներ
    - լաբորատոր սարքավորումներ
    - մարզագույք
    - աշակերտական նստարաններ
    - և այլն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետը	Պատասխանատու	Նշումներ կատարման մասին
1.	Յուրաքանչյուր ուստարի համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանը մշակելիս հաշվի առնել հանրակրթական պետական կրթակարգի պահանջներն ու նպատակները:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
2.	Դասղեկների, մեթոդմիավորման նախագահների, ծնողների սեմինար խորհրդակցություններում, մ/մ նիստերում պարբերաբար քննարկել հանրակրթական պետական կրթակարգի այս կամ այն բաժնին վերաբերվող թեմաներ:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
3.	Ավագ դպրոցում կրթության նպատակին հասնելու համար կազմակերպել զեկուցումներ, դասախոսություններ , այցելություններ, դիտումներ, շրջագայություններ, ճամփորդություններ, որոնք կնպաստեն նրանց ուսումնահետազոտական հմտությունների խորացմանը , ինչպես նաև նպատակային պլանավորման և ծրագրման գործունեություն իրականացնելու կարողությունների ձևավորմանը: Կոլեկտիվ ուսուցման ներդրում:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
4.	Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում ապահովել սահմանված թվով ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
5.	Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում կազմակերպել և սահմանված կարգով ատեստավորել դպրոցի մանկավարժներին:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
6.	Դպրոցում առաջացած կադրերի պակասը լրացնել մրցույթային կարգով:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
7.	Դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանգամանորեն ուսումնասիրել դպրոցի առանձնահատկությունները, հնարավորությունները և նախապատրաստվել աստիճանաբար, առարկա առ առարկա,	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	

	դասավանդումը իրականացնելու կաբինետային համակարգով, ապահովելով անցումը սահուն կերպով դասդասարանային համակարգից կաբինետային համակարգի:			
8.	Հաշվառման ենթարկել տարբեր առարկաների ժամերին օգտագործվող ուսումնադիտողական պարագաները, պաստառները, սխեմաները համարակալել և վերադասավորել ըստ թեմաների, վերանորոգել վնասվածները և լրացնել պակասը:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
9.	Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության կաբինետներում գույքը վերադասավորել ըստ բաժինների /մեխանիկա, օպտիկա և այլն/	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
10.	Ստեղծել լաբորատոր և գործնական աշխատանքների , կատարվող փորձերի, ցուցադրվող սարքերի հաշվառման համակարգ	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
11.	Ֆիզիկայի լաբորատորիայում աշակերտական սեղանների վրա տեղադրել հոսանքի ցածր լարում ապահովող վահանակներ, որպեսզի աշակերտները ինքնուրույն կարողանան կատարել փորձերը	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
12.	Քիմիայի լաբորատորիայի սեղանների վրա տեղադրել փորձերի կատարման համար անհրաժեշտ պարագաների հավաքածու: Աշխատանքային վիճակի բերել քիմիայի լաբորատորիայի քարշիչ պահարանը	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
13.	Ֆիզիկայի դասավանդումը ամբողջովին իրականացնել կաբինետային համակարգով	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
14.	Բոլոր առարկաների գծով ձեռք բերել տեսասկավառակներ և ստեղծել տեսասկավառակադարան, անհրաժեշտ գրականություն և մեթոդական ուղեցույցներ	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
15.	Համակարգչային կաբինետի աշխատանքը կանոնակարգել այնպես, որ այնտեղ հնարավոր լինի կազմակերպել տարբեր առարկաներից պարապմունքներ: Ստեղծել ժամանակացույց:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
16.	Բարձր վարկանիշային ցուցանիշ ապահովելու համար աշխատանքները կազմակերպել այնպես, որ դպրոցի ներքին և արտաքին գնահատականների տարբերությունը լինի փոքր՝ այդ նպատակով ա/ ակտիվացնել ծնողների մասնակցությունը	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	

	դպրոցական կյանքին բ/ աշխուժացնել սովորողների մասնակցությունը արտաուսումնական պարապմունքներին գ/ ավագ դպրոցի սովորողների համար հոսքային առականներից կազմակերպել ընթացիկ քննություններ դ/ ապահովել կիսամյակային ամփոփիչ ստուգողականների բարձր արդյունքը ե/ ապահովել ավարտական և միասնական քննությունների <<Ա>> մակարդակների համադրման ժամանակ նրանց միատեսակությունը			
17.	Մանկավարժների մասնագիտական իրազեկության աճը ապահովելու նպատակով դպրոցում ստեղծել՝ ա/ ուսումնական՝ որակի հանձնաժողով բ/ մասնագիտական զարգացման դպրոց	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
18.	Ապահովել հինգ տարուց պակաս ստաժ ունեցող ուսուցիչներին մանկավարժի որակավորմամբ համապատասխան կրթություն 1/վերապատրաստում ներ կազմակերպված ԿԱԻ կողմից 2/միջազգային կազմակերպությունների կողմից	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
19.	Ապահովել ուսումնական տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը, ստեղծել ուսումնական ռեսուրսային կենտրոն գրադարան	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
20.	Սովորողների հետ տարվող անհատական աշխատանքներում՝ խորհրդատվությունը ապահովելու , սովորողների սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով, դպրոցում աշխատանքներ տանել հոգեբանական աջակցման կենտրոն ստեղծելու ուղությամբ:	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
21.	Դպրոցի պատուհանները փոխել	2016-2021	Տնօրինություն	
22.	Գտնել բարերարներ դպրոցի նյութատեխնիկական բազան և շենքի վերանորոգման գործում՝ աջակցելու			

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետը	Պատասխանատու	Նշումներ կատարման մասին
1.	Դպրոցի ուսումնական կաբինետները համալրել ժամանակակից տեխնիկական միջոցներով	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
2.	Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության կաբինետներում տեղադրել համակարգիչներ	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
3.	Գործածության մեջ դնել ինտերնետ համակարգը, որտեղ ուսուցիչները կարող են գտնել կամ պատվիրել. ա/ էլեկտրոնային գրքեր, դասագրքեր, թերթեր, ամսագրեր մեթոդական գրականություն, բառարաններ և այլն բ/ ուսուցանել կրթական այլ համակարգչային ծրագրեր	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
4.	Կաբինետների համար ձեռք բերել. ա/ տեսախցիկներ բ/ հեռուստացույցներ գ/ տեսագրիչներ, որոնք թույլ կտան տեսագրել դասերը փորձեր և այլն, հետագայում օգտագործելու համար	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
5.	Ձեռք բերել մուլտիմեդիա պրոյեկտոր, որը հնարավորություն կտա համակարգչի տեղեկատվությունը դուրս բերել էկրանին	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
6.	Ձեռք բերել անհատական թվային ասիսմենտ /ԱԹԱ/, այն կարելի է օգտագործել նաև որպես հաղորդակցական սարք /հեռախոս, ֆաքս, էլ. փոստ/	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
7.	Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակ /հնարավորություն է տալիս օգտագործել ինտերնետային էջեր ցուցադրելու, թղթապանակներ ստեղծելու և այլն/	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
8.	Ձեռք բերել փաստաթղթերի պրոյեկտոր, որը հնարավորություն կտա ամբողջ դասարանին ցուցադրել կատարվող փորձը կամ գործողությունը	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	

9.	Կաբինետները կահավորելու համար ձեռք բերել սեղան նստարաններ, այլ ուսումնական գույք	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
10	Սպորտ դահլիճի համար ձեռք բերել սպորտային գույք	2016-2021 Ուստարի	Տնօրինություն	
11	Կահավորել նոր լսարան՝ էլ. գրատախտակով սովորողների հետազոտական աշխատանքները ցուցադրելու, ինչպես նաև սեմինար պարապմունքներ կազմակերպելու համար:			
12	Թվայնացնել դպրոցի գրադարանը			
13	Ստեղծել տարբեր առարկաների դասերի տեսանյութեր			
14	Սերտ կապեր հաստատել տարբեր ԲՈՒՀ-երի հետ			
15	Կազմակերպել ուսուցչի աշխատանքի գնահատում՝ սովորողների և ծնողների շրջանում՝ ուսուցչի գնահատման հարցաթերթիկի միջոցով /մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արդիական մեթոդների տիրապետում և այլն/			

Ծրագրի ֆինանսական ապահովումը

Հ	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Պատասխանատու	Նշումներ կատարելու համար
1.	Նոր ընդունված աշակերտների համար ստեղծել այնպիսի պայմաններ և մթնոլորտ, որ նրանք արագ հարմարվեն և համոզվեն, որ դպրոցի հարցում ճիշտ ընտրություն են կատարել:	2016-2021 ուստարի	Տնօրինություն	
2.	Կատարել սովորողների նախասիրությունների հաշվառում և դպրոցում ստեղծել վճարովի ծա ռայություններ նախասիրական ժամաքանակի հաշվին / պայմանագրային հիմունքներով/:	2016-2021 ուստարի	Տնօրինություն	
3.	Դասերից հետո ծնողական համայնքի համար համակարգչային դասարանում կազմակերպել տարբեր ծրագրերի ուսուցում /վճարովի հիմունքներով/:	20116-2021 ուստարի	Տնօրինություն	
4.	Ստեղծել հոգաբարձուների խորհուրդ և նրա գործունեության շրջանակներում, կամավորության հիմունքներով դպրոցին անհրաժեշտ օգնություն տրամադրելու դեպքում պահպանել թափանցիկության սկզբունքը, ծախսումները հիմնավորել կտրոններով, ակտերով, նշելով օգտագործման նպատակները:	2016-2021 ուստարի	Տնօրինություն	
5.	Թվայնացնել դպրոցի գրադարանը			
6.	Ստեղծել տարբեր առարկաների դասերի տեսանյութեր			
7.	Սերտ կապեր հաստատել տարբեր ԲՈՒՀ-երի հետ			
8.	Հաճախակի կազմակերպել ուսուցչի աշխատանքի գնահատում՝ սովորողների և ծնողների շրջանում:			